

Լրատու

Թիւ11
Ապրիլ 2009

Կիպրահայ Համայսքի Պետական Ներկայացուցիչի Գրասենեակի

Սիրելի հայրենակիցներ,

Պաշտօնավարութեանս գրեթէ երեք տարիներուն ընթացքին, «Լրատու»ի եռամսեայ կանոնաւոր հրատարակութեամբ, Կիպրահայութիւնը տեղեակ պահեցի մեր գաղութին հետ առնչուող հարցերուն, ինչպէս նաև տարուած յստակ ու թափանցիկ գործունեութեանս մասին:

Այս թիւով, պարտը կը զգամ շատ կենսական հարցի մը շուրջ մտահոգութիւններս ձեզի հետ բաժնելու, որովհետեւ անոր անորոշ պապան ու ներկայ ընթացքը, կը յուգէ ոչ միայն Կիպրահայութիւնը այլ համայն հայութիւնը: Վստահ են ենթադրեցիք, որ ակնարկութիւնս Մելգոնեան Կրթական Հաստատութեան վերջին իրադարձութիւններուն մասին է:

Ինչպէս բոլորդ տեղեակ էք, այս տարուայ Յունուար 22-ին, Հ.Բ.Ը.Ս. Կեդրոնական Վարչութեան ատենապետը տեսակցութիւն մը ունեցաւ Կիպրոսի Հանրապետութեան նախագահ Տիմիթրիս Խրիստոֆիասին հետ, ներկայութեամբ այլ անձնաւորութիւններու, քննարկելու Մելգոնեան Կրթական Հաստատութեան հողատարածքին ճակատագիրը եւ նոր ծրագիրներ կամ առաջարկներ ներկայացնելու կառավարութեան:

Խոցելի կտը այն է, թէ զաղութս շահագրգռող ամենանուրբ հարցին կապակցութեամբ հանդիպում մը տեղի կ'ունենայ պետական մակարդակի վրայ, որու ընթացքին կ'անտեսուի Կիպրահայ Համայնքի Պետական Ներկայացուցիչը, որ ըստ հանգամանքի, այս պարագային պէտք է առաջին հրաւիրուող անձը ըլլար: Անոր ներկայութիւնը կենսական պէտք է համարեն բոլոր կողմները եւ ընդունին, թէ վերջ ի վերջոյ, ան կը ներկայացնէ Կիպրահայութեան փափաքներն ու պահանջըները եւ

Ներկայացուցիչին պատասխանատութեան ծիրէն ներս ինքնաբերաբար կ'ընդգրկուի Մելգոնեան Կրթական Հաստատութեան առկախ մնացած ապագան:

Այս այցելութեան մասին բողոքագիրներ հրապարակուեցան Մելգոնեանի Կիպրոսի Եւ Քալիֆորնիոյ Սանուց Միութիւններու, ինչպէս նաև Դոկտ. Վարդան Օգինեանի կողմէ ուղղուած Նախագահ Խրիստոֆիասին, որոնք անդրադարձան Պետական Ներկայացուցիչին բացակայութեան: Իմ կարգիս, Փետրուար ամսուայ ընթացքին մտերմիկ զրոյց մը ունեցայ Հանրապետութեան Նախագահին հետ եւ ապա գրաւոր նամակ մը յղելով անոր, մատնանշեցի բացակայութեանս պատճառաւ համայնքս պատշաճօրէն տեղեակ չպահելու իրականութիւնը: Իր կարգին, Նորին Վսենութիւն Պրն. Խրիստոֆիաս նամակով մը զիս տեղեկացուց, թէ յառաջիկայ նմանօրինակ հանդիպումներուն տեղեակ պիտի պահուին Կրթական եւ Ներքին Գործոց Նախարարութիւններն ու Կիպրահայ Համայնքի Պետական Ներկայացուցիչը:

Վերլուծումներ կատարելու եւ գուշակութիւններ ընելու տրամադրութիւն չունիմ, ոչ ալ նպատակ ունիմ հարցականի տակ դնելու Հ.Բ.Ը.Ս. Կեդրոնական Վարչութեան ապագայ ծրագիրները: Հասարակ յայտարար մը կայ, որ բոլորս կը յուգէ որպէս Հայ եւ Սփիլոքահայ: Սպիտակ ջարդին ու ծովման դէմ պայքարելու միակ վահանը Հայ դպրոցն է ու հայեցի դաստիարակութիւնը: Արեւնտահայերէնը նահանջի մէջ է, իսկ Մելգոնեանի փակումով Սփիլոքահայութիւնը եւ ի մասնաւորի՝ Կիպրահայութիւնը իրաւագրկուեցաւ իր ազգային դրոշմէն եւ գոյատեւելու իր միակ կրթօճախէն: Որպէս Կիպրահայ Համայնքի գործող Պետական Ներկայացուցիչ, ակամայ ժառանգեցի այս ծանր բեռը, որու բարւոք լուծումին համար կարիքը կայ համագործակցութեան եւ միասնականութեան: Այս ժամանակշրջանը, մեզի համար շատ աւելի ծանր է քան տիրող համաշխարհային տնտեսական տագնապը: Մի քանի տարիէն, թերեւս կա-

րելի ըլլայ վերականգնել աշխարհի տնտեսական հաւասարակշուրթիւնը, սակայն դարձեալ Մելգոնեան մը ստեղծելը անկարելի պիտի ըլլայ: Ես ճիզ պիտի չխնայեմ խնդրոյ առարկայ կողմերուն միջեւ համադրողի դերակատարութիւն ունենալու եւ կոչ կ'ուղղեն բոլորին գործակցելու քանի ուշ չէ: Յանձնարարելի է մէկորի դնել անտեղի պատճառաբանութիւնները եւ անկողմնակալօրէն գործակցիլ՝ ի շահ մեր նոր սերունդի գոյատեւնան եւ ազգային դիմագիծի պահպանման:

Գալով Երեսփոխանական Գրասենեակի եւ Ազգային Առաջնորդարանի մօտալուն միացեալ ձեռնարկին, հաճոյքն ունիմ փոխանցելու, թէ «Լրատու»ի այս թիւն հետ պիտի գտնէք Ս. Մակարավանք ուխտագնացութեան թերթիկը: Մայսի 10-ին, երկրորդ անգամ ըլլալով, ծրագրած ենք դարձեալ այցելել բռնագրաւեալ մեր վանքը, վերանորոգելու մեր ուխտը: Յոյսով ենք, որ մեծ թիւով ազգայիններ իրենց մասնակցութիւնը կը բերեն այս ուխտագնացութեան:

Սիրելիներ,

Խօսքիս աւարտին, Յայ Առաքելական Եկեղեցւոյ Ս. Զատիկին առիթով ընդունեցեք սրտագին բարեմաղութիւններս:

**Քրիստոսյարես ի մեռելոց,
Օրհնեալ է Յարութիւնն Քրիստոսի:**

Վարդգև Մահտեսեան

Կիպրահայ Յամայնքի Պետական Ներկայացուցիչ

ԵՌԱՄՍԵԱՅ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹԻՒՆ

Քաղաքացիական հարցեր եւ կեցութիւն

Մեր գրասենեակի առօրեայ աշխատանքները կը շարունակուին նոյն թափով, ըլլայ օրինաւոր կեցութեան եւ աշխատանքի արտօնագիրներ ապահովելու գժով եւ կամ Քաղաքացիութեան դիմում ներկայացնողներուն պէտք եղած օժանդակութիւնը տրամադրելով:

Գալով Դայաստանի Դեսպանատան Յիւպատոսական գործողութիւններուն, յանձնարարելի է որ մեր հայրենակիցները իրենց անցագիրներուն նորոգութիւնները կատարեն ժամկետի եւ վաւերական կնիքի լրացման թուականէն առնուազն երկու ամիս առաջ, փոխանակ վերջին պահուն տեղեկանք պահանջելու հիւպատոսական բաժանմունքն, որ թէ մեր գրասենեակին եւ թէ հիւպատոսութեան համար յաւելեալ աշխատանք մըն է: Շատեր, Ներքին Գործոց Նախարարութեան Դպատակներու եւ Ներգաղթի Բաժանմունք (Alien & Immigration Unit) կեցութեան արտօնագիր նորոգելու ժամանակ կ'անդրադառնան, թէ իրենց կամ իրենց երեխաներուն անցագիրները ի զօրու չեն:

Այցելութիւն «Գալայճեան» Դանզատեան Տուն



Հայկական Ս.Ծննդեան օրը, Երեքշաբթի 6 Յունուար 2009-ին, Տէր եւ Տիկին Վարդգէս Մահտեսեան, ընկերակցութեամբ Թեմիս Կաթողիկոսական Փոխանորդ Վարուժան Արք. Յերկելեանի, այցելեցին «Գալայճեան» Հանգստեան Տուն եւ Ամանորեայ ու Ս. Ծննդեան լաւագոյն մաղթանքներով եւ անհատական նույնություն պատուեցին մեր տարեց հայրերն ու մայրերը:

Հպատակութիւն

Յունուարէն Մարտ 2009 ամիսներուն ընթացքին, Նիկոսիա բնակութիւն հաստատած չորս անհատներ հպատակութիւն ստացան, որոնցմէ՝ Երկուքը Կիպրահպատակի հետ անուսնացած զլալուն պատճառով։

Շնորհաւորական եւ շնորհակալական գիրեր

Երեքշաբթի, 3 Մարտ 2009 թուակիր նամակով մը, Պրն. Վարդգէս Մահտեսեան իր Երախտագիտութիւնը եւ շնորհակալութիւնները յայտնեց Կիպրոսի Յեռուստատեսիլի Ընկերութեան (RIK) տնօրէն Պրն. Թեմիս Թեմիստոքլուսին, իր ցուցաբերած գործակցութեան համար, ինչպէս նաև լուրերու բաժնի տնօրէն Եաննիս Քարեքլասին՝ իր ունեցած ներդրումին համար։ Յիշեցնենք, թէ անցեալ տարուայ իրենց ունեցած հանդիպումի օրակարգին վրայ եղող կարգ մը հարցերու բարելաւման իբրեւ դրական արդիւնք՝ 9 Մարտ 2009-էն սկսեալ Կիպրոսի Ռատիոյկայանի Հայկական ժամկեն ամենօրեայ դրութեամբ հայերենով լուրեր կը հաղորդուին։

Պետական Ներկայացուցիչը 6 Մարտ 2009 թուակիր նամակով մը շնորհաւորեց Լիմասոլաքնակ հայրենակից 12-ամեայ Ակնեսա Յովիաննիսեանը, որ վերջերս շահեցաւ Կիպրոսի Քարաքի ախոյանութիւնը։

Պրն. Վարդգէս Մահտեսեան 20 Մարտ 2009 թուակիր անհատական նամակներով շնորհաւորեց Մանօ եւ Եաննօ Գույումճեանները, որոնք Մարտի սկիզբը տեղի ունեցած դահուկարշաւի համակիպրական 16 եւ 14 տարեկանէն վար նրումներուն, խլեցին առաջնութեան բաժակները։

Իսկ յատուկ գիրով մը, Պրն. Մահտեսեան իր խոր գնա-

հատանքը փոխանցեց ՀՀ Յունաստանի Եւ Կիպրոսի Ղեսպանութեան Հիւպատոս՝ Տիկ. Լիլիթ Մարգսեանին, որ իր անսակարկ օժանդակութեամբ դիւրացուց Կիպրոս բնակութիւն հաստատած մեր հայրենակիցներու հիւպատոսական աշխատանքները, սերտօրէն համագործակցելով Երեսփոխանական Գրասենեակին հետ:

Յիշենք, որ 20 Մարտ 2009-էն սկսեալ, ՀՀ Յունաստանի Եւ Կիպրոսի Ղեսպանութեան նոր Հիւպատոսն է Տիկ. Լիանա Գրիգորեան:

Պետական-պաշտօնական մակարդակի հանդիպումներ

Կիրակի, 21 Ղետենքեր 2008ին, Պրճ. Մահտեսեան Ներկայ գտնութեաւ Մարտնիք Համայնքի նոր Արքեպիսկոպոս Եռլէֆի Անթուան Սուլֆի օժնան արարողութեան, որ տեղի ունեցաւ Մարտնիքներու Եկեղեցւոյ մէջ: Արարողութենէն Ետք, ան ներկայ գտնութեաւ նաեւ Արքեպիսկոպոս Սուլֆի ի պատիւ կազմակերպուած ճաշկերոյթին:



Երեքշաբթի, 20 Յունուար 2009-ին, Կիպրահայ Համայնքի Պետական Ներկայացուցիչը ընկերակցութեամբ Կիպրոսի Հայ Աւետարանական Եկեղեցւոյ պատասխանատու Պրճ. Հրայր ճեպէճեանի, հանդիպում նը ունեցան Խորհրդարանի Նախագահ Պրճ. Մարիոս Կարոյեանին հետ, որու ընթացքին Պրճ. ճեպէճեան տեղեկութիւններ փոխանցեց Հայ Աւետարանական Համայնքի գործունեութեան նասին:

Ուրբաթ, 23 Յունուար 2009ին, Պաշտպանութեան Նախարար Պրճ. Քոստաս Փափարոստաս յատուկ հանդիպումի մը հրաւիրեց Կիպրոսի երեք Կրօնական Փոքրանասնութիւններու

Ներկայացուցիչները, լուսաբանութիւն տալու ապագայ հաւանական զինուորական ծառայութեան ծիրէն ներս ըլլալիք փոփոխութիւններուն մասին:

Երկուշաբթի, 2 Փետրուար 2009ին, Պրն. Մահտեսեան ներկայացաւ Holiday Inn պանդոկ, շնորհաւորելու Աքէ Կուսակցութեան նորընտիր Ընդհանուր Քարտուղար Պրն. Անտրոս Կիպրիանուն:

Երկուշաբթի, 9 Մարտ 2009ին, Յայ Պետական Ներկայացուցիչը տեսակցութիւն մը ունեցաւ Աներիկայի Միացեալ Նահանգներու Կիպրոսի Դեսպան Պրն. Ֆրանք Ուրպանչիքի հետ, ներկայութեամբ Քաղաքական հարցերու պատասխանատու Պրն. ճոն Ռատիկանի:



Նշանակում

30 Դեկտեմբեր 2008 թուակիր նամակով մը, Պրն. Մահտեսեան Կրթական և ախարարութեան առ ի վաերացում առաջարկեց Պրն. Աւետիս Զուլճեանի թեկնածութիւնը, որպէս Նարեկ Յայկական Վարժարաններու Յոզաքարձութեան անդամ: Պրն. Զուլճեան պիտի փոխարինէ կազմէն վերջերս հրաժարած Տիկ. Վերա Թահմազեանը:

Զեռնարկներու Ներկայութիւն

Երեքշաբթի, 6 Յունուար 2009-ին, Տէր եւ Տիկին Վարդգէս Մահտեսեան ներկայ գտնուեցան Լառնաքայի Յայ Ակումբի Ս. Ծննդեան առթիւ կազմակերպած կեսօրուայ ճաշկերոյթին :

Չորեքշաբթի, 28 Յունուար 2009-ին, Պետական Ներկայացուցիչը ներկայ գտնուեցաւ «Դայ եւ Ռուս Արուեստագէտներու» նկարչական ցուցահանդեսին, որ տեղի ունեցաւ Լիմասոլի d/p art gallery-ին մէջ: Բացնան արարողութիւնը կատարեց Կիպրոսի Խորհրդարանի նախագահ Պրն. Մարիոս Կարոյեան:

Դինգշաբթի, 29 Յունուար 2009-ին, Տէր եւ Տիկին Վարդգէս Մահտեսեան ներկայ գտնուեցան Հ.Ե.Ս.-ի ակումբին մէջ տեղի ունեցած Տիկ. Նուրիցա Մարոսեանի պատրաստած՝ «Երկու ժողովուրդներու Սիրտը» վաւերագրական ժապաւենի ցուցադրութեան, նուրուուած Յանադ Տինքի նահատակութեան Ա. Տարելիցին:

Երկուշաբթի, 2 Փետրուար 2009-ին, Պետական Ներկայացուցիչը եւ Տիկինը ներկայ գտնուեցան արուեստագէտ գեղանկարիչ ճոն Կեվիերեամի ցուցահանդեսին, որ տեղի ունեցաւ Նիկոսիոյ Apocalypse ցուցարանին մէջ: Բացումը կատարեց Առողջապահութեան նախարար Պրն. Խորհստոս Փաթսալիտիս:

Չորեքշաբթի, 4 Փետրուար 2009-ին, Տէր եւ Տիկին Վարդգէս Մահտեսեան ներկայ գտնուեցան Յամազգայինի Կիպրոսի «Օշական» մասնաճիւղի կազմակերպած՝ Լիբանանահայ կատակերգակ՝ Փիէռ Շամմասեանի ներկայացումին, որ տեղի ունեցաւ Առաջնորդարանի «Իւթիւնեան» սրահին մէջ:

Չորեքշաբթի, 18 Փետրուար 2009-ին, Պետական Ներկայացուցիչը եւ տիկինը ներկայ գտնուեցան Նոր Սերունդ Մշակութային Սիութեան ակումբէն ներս կազմակերպուած «Դայ Անհատը եւ Ազգային Կեանքը» բազմաձայն գրոյցին:

Ուրբաթ, 6 Մարտ 2009-ին, Տէր եւ Տիկին Վարդգէս Մահտեսեան ներկայ գտնուեցան Յամազգայինի Կիպրոսի «Օշական» մասնաճիւղի կազմակերպած «Կիպրահայ Արուեստագէտներու» գործերու ցուցահանդեսի բացումին, որ տեղի ունեցաւ Առաջնորդարանի «Իւթիւնեան» սրահին մէջ: Այս ծերնարկը կը վայելէր Պետական Ներկայացուցիչին հովանաւորութիւնը:

Չորեքշաբթի, 11 Մարտ 2009-ին, Պրն. Վարդգէս Մահտեսեան բացումը կատարեց Երիտասարդ Կիպրահայ գեղանկարիչ Սեւան Մալիքեանի ցուցահանդեսին «ճամբորդութեանս սկիզբը» խորհագիրով, որ տեղի ունեցաւ Լառնաքայի Aspelia Gallery-ին մէջ: Ան իր քաջալերանքի խօսքին մէջ անդ-

րադարձաւ արուեստագէտին գործերուն մէջ նշմարելի իր արմատներուն եւ ծննդավայրին հետ կապի արտայայտութիւններուն:

Չորեքշաբթի, 24 Մարտ 2009-ին, Պետական Ներկայացուցիչը եւ Տիկինը ներկայ գտնուեցան Կիպրոսի Յայ Դատի կազմակերպած հասութաբեր ձեռնարկին, մասնակցութեամբ հայրենի երգի Թարա Սիմոնեանի եւ իր նուագախումբին, որ տեղի ունեցաւ Նիկոսիոյ «Բաւիլիոն» սրահեն ներս: Այս անհայրներաց ձեռնարկը կը վայելէր Խորհրդարանի հայագի նախագահ Պրն. Մարիոս Կարոյեանի հովանաւորութիւնը եւ ներկայութիւնը:

Հայկական հին գերեզմանատուն

Կիրակի 22 Մարտ 2009-ին, յատուկ Եկեղեցական արարողութեամբ եւ հանդիսապետութեամբ Կաքողիկոսական Փոխանորդ Տէր Վարուժան Արք Յերկելեանի եւ Տէր Մոմիկ Քահանայի, Վերանորոգուած Հայկական հին գերեզմանատան մէջ Վերաբաղուեցան դուրս բերուած ածիւնները, որ Ապրիլ 2005էն, բոլորիդ ծանօթ պատճառներով, Ս. Պօղոս մատոււեն ներս զետեղուած էին յատուկ տուփերու մէջ:

Որպէս Կիպրահայ Համայնքի Պետական Ներկայացուցիչ, աշխատանքներուս առաջնահերթ նպատակներէն մէկն էր դասաւորել այս գերեզմանատան հարցը, որ մեծ փորորիկ ստեղծած էր Կիպրոսի հայ թէ օտար շրջանակներէն ներս:

Ուստի, 27 Յոկտեմբեր 2006 թուակիր նամակով մը ուղղուած Ներքին Գործոց Նախարար Պրն. Նեղոլիս Սիլիկիոտիսին, խնդրեցի Կառավարութեան նիւթական օժանդակութիւնը վերանորոգելու այս մշակութային արժեք ներկայացնող վայրը: Նամակին հետ ներփակուած էր նաև 4arc+ նարտարապետական ընկերութեան ներկայացուցած ծախսերու նախահաշիւը (Budget):

Պետապնդումներէ եւ զանազան պետական մակարդակի տեսակցութիւններէ ենք, 12 Նոյեմբեր 2007 թուակիր նամակով մը, Ներքին Գործոց Նախարարութիւնը զիս տեղեկացուց, թէ Կիպրոսի Կառավարութիւնը որոշած էր Կ.Ռ. 90.000 (մօտ €154.000) տրամադրելով, մասնակցիլ բարեզգարդման աշխատանքներուն :



Ծանօթանանք Կիպրոսի Հանրապետութեան Օրէնքներուն

Պարտադիր Զինուորական Ծառայութիւն

19 Յունիս 2007 թուակիր Նախարարաց Խորհուրդի թիւ 65.732 որոշումով, Կիպրոսի Կրօնական Փոքրամասնութեանց (Հայ, Մարոնիթ, Լատին) պատկանող՝ 18 տարիքը Եւ Երկրորդական ուսումը ամբողջացուցած տղաք, որոնք ծնած են 01.01.1990-էն ետք, 2008 թուկանէն սկսեալ մաս կը կազմեն պարտադիր զինուորական ծառայութեան ծրագիրին:

Ծառայութեան լրիւ շրջանը 25 ամիս է, որ առ այժմ անփոփոխ կը մնայ, հակառակ վերջին շրջանին զայն նուագեցնելու վործներուն:

Կիպրահպատակներ, որոնք 10 տարիէ աւելի իրենց ընտանիքներուն հետ դուրսը ապրած են Եւ կը փափաքին դարձեալ Կիպրոս հաստատուիլ, ենթակայ են զեղչուած ժամանակաշրջանով զինուորական ծառայութիւն կատարել՝ ըստ Կիպրոս վերադարձի ժամանակ իրենց տարիքին:

Ստորեւ կը ներկայացնենք տարիքներով ենթաժամանումները.-

1. Անոնք, որոնք Կիպրոս վերադարձի ժամանակ 26-49 տարիքի միջեւ են, 3 ամսուայ ծառայութեան ենթակայ են:

2. Անոնք, որոնք Կիպրոս վերադարձի ժամանակ 18-26 տարիքի միջեւ են, 6 ամսուայ ծառայութեան ենթակայ են:

3. Անոնք, որոնք Կիպրոս վերադարձի ժամանակ 13-18 տարիքի միջեւ են, 12 ամսուայ ծառայութեան ենթակայ են:

4. Անոնք, որոնք Կիպրոս վերադարձի ժամանակ 10-13 տարիքի միջեւ են, 18 ամսուայ ծառայութեան ենթակայ են:

Նկատի առնելով վերոյիշեալ տուեալները եւ ըստ մեզի փոխանցուած Պաշտպանութեան Նախարարութեան տեղեկութեանց, իւրաքանչիւր հարց սակայն կը քննուի անհատաբար իր էռլեան մեջ:

Յաւելեալ տեղեկութիւններու համար հեռաձայնել.-

Պաշտպանութեան Նախարարութիւն : 22-807525

Նիկոսիոյ գինուորական գրասենեակ : 22-515238

Լառնաքայի գինուորական գրասենեակ : 24-411300

Լիմասոլի գինուորական գրասենեակ : 25-369850

Պաֆոսի գինուորական գրասենեակ : 26-933270

Վարդգէս եւ Մակի Մահտեսեաններ

Քրիստոսի Յարութեան

Սուրբ տօնին առիթով

Կը շնորհաւորեն Կիպրահայ Համայնքը

Եւ մեր հայրենակիցները

մաղթելով՝

առողջութիւն եւ արեւշատութիւն

Քրիստոսյարեա ի մուելոց,

Օրհեալ է Յարութիւնն Քրիստոսի

**ԿիՊՐԱՎԱՅ ՀԱՍԱՅՆԸԻ ՊԵՏԱԿԱՆ
ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉԻ ԳՐԱՍԵՆԵԱԿ**

Քաղաքական Գրասենեակ

9B & C Kastorias Street, Ayia Paraskevi, 2002 Strovolos

Հեռախոս 22- 45 45 40, Հեռատիպ 22- 42 46 42

Ել. Հասցե office@armenianmp.com

Ոստայնեց՝ <http://www.armenianmp.com>

Խորհրդարանական Գրասենեակ

Office Δ-2-2, House of Representatives, 1402 Nicosia

Հեռախոս 22- 40 72 02, Հեռատիպ 22- 40 74 42

Ել. Հասցե vmahdessian@parliament.cy